
ԵՊԲՀ ՔՈԼԵՋԻ «ՊՐՈԹԵԶԱՎՈՐՈՒՄ, ՕՐԹԵԶԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Ուսանողների մասնակցություն 64 (96%)

Հարցմանը մասնակցել է 64 ուսանող (96%), ինչը բարձր ներգրավվածություն է և արդյունքները դարձնում է վստահելի ու ներկայացուցչական:


1. Նշեք որ կուրսում եք սովորում



2. Ձեր միջին առաջադիմությունը՝




3. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գրաֆիկներում գերակշռում են 4 և 5 միավորները, ինչը վկայում է, որ տեսական պատրաստվածությունը ընդհանուր առմամբ գնահատվում է բարձր մակարդակով: Ցածր գնահատականների մասնաբաժինը փոքր է, հետևաբար տեսական ուսուցման համակարգային խնդիր չի արձանագրվում:Այնուամենայնիվ, 3 միավորների որոշակի շերտը ցույց է տալիս, որ առկա է բարելավման կարիք:


4. **Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



Գործնական հմտությունների ցուցանիշը դրական է, սակայն տեսականից փոքր-ինչ ցածր :Սա կարևոր դիտարկում է, քանի որ ծրագիրը տեխնիկական և կիրառական ուղղվածություն ունի: Բաց պատասխաններում նշված պրակտիկայի պակասը համընկնում է այս դիտարկման հետ: ՈՒստի գործնական բաղադրիչը ունի բարելավման կարիք:

5. **Մասնագիտական առարկաների ուսումնասիրման ժամանակ բավարար չափով հասանելիություն ունեցել եք անհրաժեշտ գործիքների, տեխնիկական միջոցների, նյութերի**

(գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ հասանելիություն չեմ ունեցել, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Գրաֆիկում ծայրահեղ ցածր գնահատականներ չկան, սակայն առկա ցածր և միջին միավորների զգալի բաժինը ցույց է տալիս մասնակի բավարարվածություն:

Բաց առաջարկներում նշված նյութերի պակասը (հատկապես պրոթեզարանում) բացատրում է սա և հաստատում , որ նյութատեխնիկական ապահովվածությունը զարգացման առաջնահերթ ուղղություն է:


6. **Որքանով եք բավարարված անհրաժեշտ գրականության հասանելիությամբ**

(գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)




Ցուցանիշը միջինից բարձր է:Սա ցույց է տալիս, որ ուսումնական գրականության հասանելիությունը ընդհանուր առմամբ բավարար է և համակարգային խնդիր չի արձանագրվում:

7. **Որքանով լիարժեք և արդյունավետ են օգտագործվում դասաժամերը դասախոսների կողմից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ ոչ լիարժեք և անարդյունավետ, 5-ը՝ լիարժեք և արդյունավետ)




Գրաֆիկներում գերակշռում են դրական գնահատականները, սակայն առկա է միջին գնահատականների որոշակի շերտ: Ըստ ուսանողների մեկնաբանությունների, խնդիրը դասաժամերի կառուցվածքի և ձևաչափի մեջ է:

8. **Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված հանրակրթական առարկաների դասավանդման որակից** (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



9. Ընդհանուր առմամբ որքանով եք բավարարված մասնագիտական առարկաների դասավանդման որակից (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ**)**



8րդ և 9րդ գրաֆիկների տվյալները ցույց են տալիս, որ մասնագիտական և հանրակրթական առարկաների դասավանդման որակից բավարարվածությունը գնահատվել համարյա միանման:

10. Ինչը և **ինչպես կփոխեիք ուսումնական գործընթացը առավել լավը** և **արդյունավետ դարձնելու համար** (եթե առաջարկը վերաբերվում է կոնկրետ առարկային/ամբիոնին, նշեք առարկայի անվանումը , խնդիրը և/կամ առաջարկությունը):

Սույն հարցին պատասխանել է 10 ուսանող, որոնց պատասխաններն առանց խմբագրման ներկայացված են հավելված 1ում

Ուսանողների կարծիքի ընդհանրացում

Ուսանողների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը `
Ընդհանուր առմամբ ծրագիրը կայուն և դրական գնահատվող է, սակայն զարգացման հիմնական ուղղությունը պետք է լինի գործնական և նյութատեխնիկական բաղադրիչի ամրապնդումը:

Ընդհանուր եզրակացություն

«Պրոթեզավորում, օրթեզավորում և վերականգնողական տեխնիկա» կրթական ծրագրի արդյունավետության վերաբերյալ հարցման արդյունքների և գրաֆիկական ցուցանիշների համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ կրթական ծրագիրը ընդհանուր առմամբ գնահատվում է դրական:

Ուսանողները բարձր են գնահատում տեսական պատրաստվածությունը և մասնագիտական առարկաների բովանդակությունը: Մասնագիտական բլոկը համարվում է ծրագրի ուժեղ կողմը:

Միևնույն ժամանակ, վերլուծությունը բացահայտում է մի քանի առաջնահերթ զարգացման ուղղություն.

- Գործնական բաղադրիչի ընդլայնում և պրակտիկայի ավելացում
- Պրոթեզարանում նյութատեխնիկական ապահովվածության բարելավում
- Դասաժամերի կազմակերպման և ձևաչափի վերանայում
- Առանձին առարկաների (մասնավորապես ՆԶՊ, քիմիա) դասավանդման արդյունավետության բարձրացում

Առաջարկություններ կրթական ծրագրի բարելավման համար

«Պրոթեզավորում, օրթեզավորում և վերականգնողական տեխնիկա» կրթական ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսանողների հետադարձ կապի վերլուծության արդյունքում առաջարկվում է իրականացնել հետևյալ քայլերը՝

1. Ընդլայնել գործնական և լաբորատոր պարապմունքների քանակը
2. Ապահովել ավելի ակտիվ համագործակցություն պրոթեզարանների և վերականգնողական կենտրոնների հետ՝ պրակտիկաների արդյունավետ կազմակերպման նպատակով:
3. Բարելավել ուսումնական լաբորատորիաների նյութատեխնիկական բազան և ապահովել անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով:
4. Թարմացնել ուսումնական ծրագրում կիրառվող մասնագիտական գրականությունը և զարգացնել էլեկտրոնային ուսումնական ռեսուրսները:
5. Կիրառել ավելի ինտերակտիվ դասավանդման մեթոդներ:
6. Պարբերաբար իրականացնել ուսանողների հետադարձ կապի հարցումներ և դրանց արդյունքների հիման վրա կատարել ծրագրի բարելավում:

Հավելված 1

Ստորև ներկայացվում է 10 ուսանողների պատասխաններն առանց խմբագրման՝

1. դասերը անել քոլեջում,և առաջին հերթով
2. ՀՊՑ ամբիոնից ՆԶՊ առարկայի դասախոսին փոխել հետ Պարոն Պարզյանին(112-9)
3. ՀՊՑ ամբիոնից ՆԶՊ առարկայի դասախոսին փոխել հետ Պարոն Պարզյանին(112-9 խումբ)
4. Դասընթացի ժամանակը 80 լավ կլիներ 45 լիներ
5. Մասնագիտական առարկաների բացակայություն և քիչ պրակտիկա
6. Քիմիայի ավելի մանրամասն և խորացված դասավանդում
7. Կցանկանայի կենտրոնանալ պրոթեզարանում անցկացվող առարկաներին,որոնք մեզ լիարժեք բացատրվում են,սակայն գործնականորեն գիտելիքն ամրապնդելու համար բավարար նյութաքանակ չկա:
8. ՀՊՑ ամբիոնից ՆԶՊ առարկայի ուսուցչին փոխել Պարոն Պարզյանին
9. հնարավորություն միգուցե և առավելություն հետագայում ընդունելության համար, առարկանները բավականին հետաքրքիր են
10. Որ ավելի շատ գործնական լինի